Արտակարգ ուրախ տրամադրություն էր տիրում Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Մովսես Խորենացու անվան նախակրթարանի երեխաների եւ ծնողների մոտ: Փոքրիկներն այդ օրը ներկայանալու էին «Զատիկ» տոնահանդեսով, որ նախաձեռնել էին նախակրթարանի ուսուցչուհիներ Եվգենյա Մարկոսյանը, Լալա Գեւորգյանը, Անգելինա Նազարյանը, Անահիտ Մկրտչյանը, իսկ տոնական հանդիսության հովանավորությունը ստանձնել էին Վիրահայոց Թեմը եւ Աֆյան ծնողները:

Բարի մրջյուն զատիկի երանգներով զուգված երեխաներն այդ օրը ունենալու էին նաեւ հյուրեր: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի ուրախությունը Խորենացու անվան նախակրթարանի սաները կիսելու էին իրենց հասակակիցների՝ մայրաքաղաքի թիվ 28 մանկապարտեզի սաների հետ: